

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀԻՄԱՐՆԵՐ
SPECIAL TOPIC: FOOLISH

Այս վերաբերմունքը՝ անձը ՀԿ-ում արտահայտվում է մի քանի տերմիններով:

1. «Հիմար», «հիմար մարդ» (BDB 17, KB 21) – տես՝ Հոբ 5:2,3, Սաղմ. 107:17, Առակ. 1:7 (և այլն), Եսայի 19:11, 35:8, Երեմ. 4:22, Ովս. 9:7:
2. «Ինքնահավան» (BDB 493, KB 489) – տես՝ Սաղմ. 49:10, 92:6, 94:8, Առակ. 1:22,32 (և այլն), Ժող. 2:14-16, 5:1, 3, 4 (և այլն):
3. «Դատարկ մարդ» (BDB 614, KB 663) – տես՝ 2 Օր. 32:6,21, 2 Թագ. 3:33, 13:13, Հոբ 2:10, 30:8, Սաղմ. 14:1, 39:8, 53:1, 74:18,22, Առակ. 17:7,21, 30:22, Երեմ. 17:11
4. «Հիմարություն/պնդանակատություն» (BDB 698, KB 754) – տես՝ Ծննդ. 31:28, 1 թագ. 13:13, 2 Թագ. 15:31, 24:10, 1 Մնաց. 21:8, 2 Մնաց. 16:9, Ժող. 2:19, 10:3,14, Ես. 44:25, Երեմ. 5:21

Հիսուսը երեք բառ էր օգտագործում հիմար մարդկանց բնութագրելու համար՝

1. *aphrōn* , Ղուկաս 11:40, 12:20
2. *anoētos* , Ղուկաս 24:25
3. *mōros* , Մատթ. 5:22, 23:17,19

Հիսուսի կողմից այս նկարագրության մասին ամենահզոր հայտարարությունը, որ մարդը օգտագործում է մեկ ուրիշին ասելով, գտնվում է Մատթ. 5:22-ում, որտեղ *mōros* արտացոլում է արամերենի *raca* բառը, որը նշանակում է կյանքի համար անկարող: Այս բաժինը գործ չունի այն հատուկ անունների հետ, որ մեկը կարող է մյուսին անվանել՝ կոչել, այլ ենթադրյալ հավատացյալի վերաբերմունքը մյուսների հանդեպ, հատկապես ուխտի մեջ գտնվող եղբայրների:

Հունարեն *mōros* տերմինը, որը թարգմանված է «հիմար», նախատեսված է եղել արտահայտելու արամերենի *raca* տերմինը: Մակայն Հիսուսի բառախաղը հունարենի *mōros* բառի շուրջ չէր, այլ հիմնականում երբայերեն *mōreh* բառի, BDB 598, որը նշանակում էր «ապստամբել Աստծո դեմ» (տես՝ Թվոց 20:10, 2 Օր. 21:18,20, տես՝ Ֆ. Ֆ. Բրյուսի *Հարցերի պատասխաններ*, էջ՝ 42): Հիսուսը փարիսեցիներին կոչեց հենց այս տերմինով Մատթ. 23:17-ում: Ոչ միայն մեր գործողությունները, այլ նաև մեր շարժառիթները, վերաբերմունքները և նպատակներն են որոշում մեղքը մեր ընկերների դեմ: Սպանությունը, որքանով որ Աստված է անհանգստացած, կարող է լինել անգամ մի միտքը: Մեր եղբոր կամ քրոջ հանդեպ ասելությունը հստակ ցույց է տալիս, որ մենք չենք ճանաչում Աստծուն (տես՝ 1 Հովհ. 2:9-11, 3:15, և 4:20): Սոցիալական տիրույթի լեզվով ասած, ասելությամբ լի միտքը ավելի լավ է քան մահը, բայց հիշե՛ք, որ Սուրբ Գրքի այս բաժնի նպատակն է ցրել ամեն տեսակի ինքնաարդարացում և հպարտություն մարդու սեփական բարության մեջ:

Պողոսը հետևում է ՀԿ-ին և Հիսուսին՝ հիմար մարդկանց բնութագրող մի քանի տերմիններ կիրառելիս:

1. *aphrōn* , 1 Կորնթ. 15:36, 2 Կորնթ. 11:16, 19, 12:6,11
2. *mōros* , 1 Կորնթ. 3:18, 4:10 և Հռոմ. 1:22-ում նմանօրինակ ձևը

Մարդիկ, որոնք պնդում են, որ ճանաչում են Աստծուն, սակայն մտածում և գործում են անպատշաճ կերպերով, հաճախ են նկարագրվում որպես աղքատիկ մտայնությամբ: Պողոսի հեզնական մեկնությունները՝ հաճախ 1 և 2 Կորնթացիների թղթերում, հայտնում են նմանատիպ մարդուն: Նրանք այնքան վստահ էին, որ ունեին գիտություն, որ չէին կարողանում տեսնել և թ՛չ էլ ճանաչել ճշմարիտ՝ իրական գիտությունը: